

ԼԵԶՎԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒՅԹՈՒՆԸ

Բ. Խ. ՄԵՇՈՒՆՑ

Հայոց լեզվի ծագման և զարգացման ընթացքը, ցեղակից լեզուների հետ ունեցած նրա առնչությունները հայագիտության մեջ մշտապես ներկայացվել են հին հայերենում արտահայտված փաստերի հիման վրա: Բնականաբար ուսումնասիրությունից համարյա դուրս են մնացել բարբառային հնագույն երևույթները: Եթե հայագիտական ընդհանուր ուսումնասիրությունների մեջ ինչ-ինչ առիթներով հիշատակվում են խոսակցական լեզվի առանձին փաստեր, ապա ավանդական մոտեցումն ակնհայտորեն պահպանվում է բարբառագիտական մենագրություններում, ուր պատմական հնչյունափոխության դրսևորումները ցույց տալու համար անգամ նախահիմք են ընդունում գրաբարը: Նախալեզվի և բարբառների միջև եղած անմիջական կապի անտեսման և դիրքային ու փոխազդեցական հնչյունափոխական երևույթների միասնական հաշվառման ու համադրման պատճառով առաջանում են բազմաձևություններ, որոնց մեջ դժվար է լինում առանձնացնել նախնականը և ներքին զարգացման հետևանքով առաջ եկած փաստերը: Այս հիմքի վրա էլ խոսակցական լեզվի նկատմամբ աստիճանաբար ձևավորվել է անվստահություն, ուսումնասիրությունից դուրս են մնացել ոչ միայն հնչյունական շատ երևույթներ, այլև նախալեզվյան ծագում ունեցող բազմաթիվ բառեր և բառաձևեր: Այս բացը յուրահատուկ ձևով արտահայտվում է նույնիսկ արմատական բառարանում, ուր ժողովրդական լեզվում սովորական գործածություն ունեցող մի շարք բառեր բերված են իմաստային անորոշությամբ և առանց հավաստի փաստարկումների:

Պետք է նշել, սակայն, որ բարբառային փաստերի նկատմամբ այլ մոտեցում է ցուցաբերում Գ. Ջահուկյանը իր «Հայոց լեզվի պատմություն» և «Հայ բարբառագիտության ներածություն» արժեքավոր մենագրություններում: Հատկանշական է, որ թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում հեղինակը հավաքում և ծագումնաբանական քննարկման է ենթարկում հին հայերենում չպահպանված և խոսակցական տարբերակներում գործածվող բառերի մի քանի շարքեր, ցեղակից լեզուների փաստերով հաստատում դրանց նախալեզվյան ծագումը: Գ. Ջահուկյանի այս նոր մոտեցումը կարծես ներքուստ պահանջում է բարեխղճություն ոչ միայն բարբառային բառերի, այլև հնչյունական ու քերականական հնագույն երևույթների նկատմամբ: Այդ խնդրի իրագործման երաշխիքն, անշուշտ, համեմատության եզրերի հստակեցումն է, նախալեզու- գրաբար // բարբառներ կողմերում եղած փաստերի անկողմնակալ արժեքավորումն ու հաշվառումը: Հենց այդ նախադրյալների հաստատման ուղղվածությամբ էլ առաջ ենք տանելու սույն հոդվածում նախատեսված բոլոր կարգի քննարկումները:

Անսահմանափակ փաստական նյութի որոշակի քանակն ապահովելու նպատակով հոդվածի մեջ ընդգրկում ենք միայն ա ձայնավորով սկսվող բնիկ բառերը՝ նկատի ունենալով և՛ արմատական բառարանը, և՛ բառարանից դուրս եղած որոշ փաստեր: Փաստական նյութի նախնական դասդասումները ցույց են տալիս, որ նախալեզվյան բառաձևերի հաստատման ընթացքում հայերենի գրական և խոսակցական տարբերակներում գործել են հնչյունափոխական և բառակազմական մի շարք ընդհանուր օրինաչափություններ (մինևնույն աճականի օգտագործում, բաղաձայնից առաջ ա ձայնավորի հավելում, ձայնդարձի

միևնույն աստիճանով հիմքերի ձևավորում և այլն): Նույն կերպ հավասարաչափ է քանակական բաշխվածության հարաբերակցությունը գրականի և խոսակցականների միջև: Բավական է նշել, որ արմատական բառարանում տեղ գտած ա ձայնավորով սկսվող մոտ հարյուր բառարմատներից քսանից քիչ միավորներ են բացակայում բարբառներում: Ընդ որում նման կարգի մի շարք բառեր հին հայերենում ունեցել են սահմանափակ կիրառություն կամ գործածվել են միայն բաղադրությունների մեջ: Այլ հանգամանքների բացակայության դեպքում նույնիսկ այդ տարբերություններն աննշան են դառնում, եթե նկատի ենք ունենում բառերի հաստատման օրինաչափությունները հայերենի բարբառներում: Այդ պայմանականությունը որոշակի դարձնելու համար նշենք Մ. Աբեղյանի հետևյալ դիտողությունը. «Ժողովրդական առօրյա խոսակցության համար նույնանիշ բառերն ավելորդ ծանրաբեռնվածություն են, որովհետև այդ ժամանակ լեզուն բանեցնում ենք մեր մտքերը պարզապես ուրիշներից հաղորդելու և ուրիշներից հասկանալու համար, ուստի նույնանիշ բառերի կարիք չկա, քանի որ մեկ բառն էլ բավական է միայն արտահայտելու համար: Այդ պատճառով, եթե մի կողմից նույնանիշ բառեր են գալիս, մյուս կողմից էլ բարբառները ձգտում են այդ անօգուտ առատությունը թողափելու»: Նման պատճառականությամբ կարելի է բացատրել աղտ//աղ, ամ//տարի, այտ//թուշ, անդ//շեմք, անձուկ//նեղ, անուրջ//երազ, ասր//բուրդ, արդ//ձև, արդ//հիմա գուգահեռ ձևերից վերջին եզրերի հաստատվելը հայերենի բարբառներում: Այստեղ հավականությունն ավելի է մեծանում, եթե նկատի ենք ունենում, որ նրշված հոմանիշների շարքում հայտնված աղտ «աղ», անդ «շեմք» բառերն ընդհանրապես չեն պահպանվել աշխարհաբար գրական լեզվում, իսկ ամ, ասր, արդ «ձև» բառերի համեմատությամբ առավել գործածական են դրանց գուգահեռները: Հավանական պետք է համարել, որ իրենց նախնական իմաստների ոչ որոշակիության պատճառով ազդր «մեջքից մինչև ծունկը գտնված մասը», աճիւն «մոխիր», աւն «սեփականություն», առոզ «աղբյուր, աղբյուրի ջուր», ատաղձ «շինանյութ, փայտեղեն», արծնել «տաք երկաթով կամ գունավոր մոմով փայտի վրա նկարել» բառերը տեղ չեն գտել ժողովրդական լեզվում:

Նախալեզու-գրաբար, նախալեզու-բարբառներ, գրաբար-բարբառներ եզրերի միջև եղած բառային առնչությունները ցույց տալու համար խիստ անհրաժեշտ է հաշվի առնել բառարմատների (բառահիմքերի) պահպանման որոշակիորեն արտահայտվող հնարավորությունները: Այս առումով հայերենի և՛ գրական, և՛ խոսակցական տարբերակներին հատուկ է մի ընդհանուր միտում, ըստ որի ժամանակի ընթացքում բառը կարող է կորցնել իր անկախ գործածությունը՝ պահպանելով, սակայն, իր գոյությունը բարդ և ածանցավոր բաղադրությունների կազմում: Պետք է նշել, որ նման երևույթի գիտակցումը մինչև այժմ հատուկ է եղել միայն նախալեզու-գրաբար բառային համեմատությունների մեջ, քանի որ բառաքննական մեծ ու փոքր ուումնասիրություններում հայագետներն ամենայն բարեխղճությամբ որոնում ու գտնում են նախալեզվյան հիմքեր և գրաբարյան բաղադրյալ կառույցներից դուրս են հանում համապատասխան արմատական ձևեր՝ հայերենի բառակազմական հնարավորություններով համոզիչ դարձնելով դրանց նախնական գոյությունը հայերենում: Այս առումով բավական է վկայակոչել արմատական բառարանը, ուր Հր. Աճառյանը բառարմատների հայտնաբերման հիանալի օրինակներ է տալիս: Ա ձայնավորով սկսվող բաղադրյալ կառույցներով բառերի քննությունից միանգամից պարզ է դառնում հայ բարբառների միանական վերաբերմունքը դրանց նկատմամբ: Այսպես, հայերենի համարյա բոլոր բարբառներում էլ հաստատվել և սովորական գործածություն են ստացել ականջ, աղքատ, անդունդ, անկանիլ, արդար, արմատ, արմունկ(ն), առակ բառերը: Ինչ ավելի պակաս թիվ

¹Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 156:

են կազմում այն բաղադրյալ բառերը, որոնք չեն արտահայտվել և ոչ մի բարբառում: Անշուշտ, վերջին ձևերը կամ գրաբարյան կազմություններ են, կամ հայերենի հնագույն վիճակից եկած գրական փոխառություններ, որոնք խորթ էին խոսակցական լեզվին: Այդ կարգի բառերից են՝ ազագել, աղաաղ, աղամուկ, ամբողջ, ամպրոպ, անդաստան, առագաստ, արահետ, առադիկ, առապիկ, արբանեակ: Մասնակի օրինակներ կան, որոնք գործածական են հայերենի սակավաթիվ բարբառներում՝ ժառանգված նույնությամբ կամ կառուցվածքային ինչ-ինչ առանձնահատկություններով: Այսպես, Հր. Աճառյանի վկայությամբ անկիւն բառն իր հիմնական իմաստով պահպանվել է միայն Ղարաբաղի բարբառում. «Ղրբ. անգոն «կողմ», իսկ այլափոխված նշանակությամբ ունենք վն. «պատի մեջ շինված դարան», Խն. «մատան», Սլմ. «թոնրի հատակը, որի վրա բացված է ակը»²:

Առասպել և անկողից բառերը գործածվում են արևմտահայ մի քանի բարբառներում, ընդ որում անկողից-ը հիմնականում պահպանվել է նախալեզվին հատուկ արմատական ձևով՝ գողիցք (Կր., Ախց.), գողէնք (Տփ.), գօղվէնք (Վն.)³: Աքաղաղ բառը պահպանվել է քիչ թվով բարբառներում և ունի գրաբարից տարբեր կառուցածն, որն առավել հարմար է կապել ցեղակից որևէ լեզվի հետ, քան բխեցնել հին հայերենից, որը Հր. Աճառյանը հիմնավորում է հնչյունափոխական մի շարք օրինաչափությունների վկայակոչումով⁴:

Փաստերը ցույց են տալիս, որ անհամեմատ մեծ են բառարմատների պահպանման հնարավորությունները հայերենի բարբառներում, քանի որ հնագույն արմատներ ու բառաձևեր արտահայտվում են ոչ միայն բաղադրյալ բառերի կազմում, այլև բազմաթիվ ասացվածքներում, անեծքներում, օրհնանքներում, իմաստուն խոսքերում: Այդ ամենը տարածված է բարբառից բարբառ, խոսվածքից խոսվածք՝ հանդես բերելով և՛ ընդհանրություններ, և՛ յուրահատկություններ: Հակառակ դրան՝ բարբառագիտական մենագրությունների մեծագույն մասը շատ անտարբեր է այս խնդրում: Բարբառային բառերն ավանդաբար ներկայացվում են իմաստային բացատրություններով՝ լավագույն դեպքում բավարարվելով մեկ-երկու բաղադրությունների բաղադրիչների առանձնացումով: Չնայած բարբառային բառերի կառուցվածքային մեկնություններով հարուստ է Էդ. Աղայանի «Մեղրու բարբառը» աշխատությունը, սակայն այստեղ չկա որևէ կարգի դասդասում, չեն առանձնացվում և խմբավորվում անկախ գործածությունից զրկված բառային հին միավորները: Այս առումով առանձնացվում է Ալ. Մարգարյանի «Գորիսի բարբառը» գիրքը, ուր հեղինակը հանդես է գալիս հետևյալ սեղմ դիտողությամբ և վկայում մասնակի փաստեր. «Կան այնպիսիները (հնդեվրոպական արմատներ), որոնք չունեն անկախ գործածություն և պահպանվում են միայն բաղադրությունների մեջ, ինչպես՝ ալի+ա+ուր - ալուր> հիլիվեր // հնյիվեր // հնյիվեր, որբ+և+այրի - որբևայրի> իրփիվերի // ուրփիվերի // ըրփիվերի, բորբ>պեփավ անել(բորբել), բեկ> ծընէփակ (<ծնեբեկ), հուր>հըրհըրատել // հուրհրատել, ջինջ> ճինջել և այլն»⁵:

Բառարմատների պահպանման հնարավորությունների հետ միաժամանակ այլ պայմաններ են պահանջում հնչյունափոխական հնագույն երևույթների քննարկումները: Այսպես, պատմական հնչյունափոխության օրինաչափությունները միանգամայն տարբեր կերպ են արտահայտվում շեշտի տակ և շեշտին նախորդող ու շեշտահաջորդ վանկերում: Եթե երկբարբառների անցումների համար կարևոր նշանակություն ունեն և՛ շեշտը, և՛ նախաբաղաձայնական ու նախաձայնավորական դիրքերը, ապա բաղաձայնական համակարգի համար առանձնացվում է բառասկիզբը: Սակայն այս պայմանները հնարավոր

² Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 200:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 201:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 369:

⁵ Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառը, Երևան, 1975, էջ 239:

է դառնում հաշվի առնել միայն այն դեպքում, երբ Ակատի են ունենում տվյալ օրինաչափության տարածման ոլորտները, քանի որ նախալեզվի հնչյունական համակարգը հայերենում հաստատվել է տարածքային Ակատելի տարբերություններով, չնայած չեն բացառվում նաև հնչյունափոխական ընդհանուր երևույթները: Նման իրավիճակ է ներկայացնում նախահավելական *Ֆ* հնչյունի արտահայտությունը հայերենի գրական և խոսակցական տարբերակներում: Հայագիտական ուսումնասիրություններում եղած կարծիքները վկայում են, որ հին հայերենի համեմատությամբ բառասկզբի *Ֆ* հավելականը առավել չափով պահպանվել է Արցախ-Սյունիքի բարբառախմբում: Դեռ ավելին, հարցի ամբողջական դիտարկումից պարզ է դարձել, որ հիշյալ տարածքում խոսվածքներ կան, որոնք բառասկզբի *Ֆ* բաղաձայնի արտահայտությամբ լիովին համապատասխանում են գրաբարին, տարբերությունները երևան են գալիս այն դեպքերում, երբ նախալեզուն կամ ցեղակից լեզուները բառասկզբում վկայում են *Ֆ*-ին համապատասխան որևէ հնչյուն, և հին հայերենում այն չի արտահայտվում: Այս դիտողությունը հաստատելու համար բավական է նշել, որ *ա* ձայնավորով սկսվող *աներ*, *անիծ*, *անց*, *ափ* բառերի սկզբում հավելական *Ֆ* ունեն միայն Ղարաբաղի, Գորիսի, Ծամախի բարբառները, մինչդեռ այի «սպիտակ մագ», արբ բառերի սկզբում հավելականն ընդհանրացված է բոլոր բարբառներում: Այդ սահմանափակ օրինակներից անգամ կարելի է եզրակացնել, որ նախնականության հարցի որոշումը դեռևս կարիք ունի նորանոր փաստարկումների: Այդպիսի Ակատառումով էլ հարկ ենք համարում ներկայացնել մեկ-երկու դիտողություններ մասնակի կամ ամբողջական քննարկումների արժանացած բառարմատների վերաբերյալ:

Ինչպես արդեն նշեցինք, հայերենի բոլոր բարբառներն էլ *ալի* և *արբ* բառերի սկզբում պահպանել են նախահավելական *Ֆ* հնչյունը, որը Հր. Աճառյանը բխեցնում է նախալեզվյան *ք* և *ս* բաղաձայններից. «Ինչպես տեսնվում է, բարբառները միաձայն վկայությամբ ցույց են տալիս նախաձայն *Ֆ*, որը ոչ թե մի նոր հավելական է, այլ նախալեզվյան *ք* ձայնի կանոնավոր շարունակությունը»⁶: Նույնպիսի հավաստիությամբ է արտահայտվում հեղինակը նաև *արբ* բառի հնագույն լինելու և բարբառային ձևի նախնականության մասին. «Ըստ այսմ հետին հայերենի և գավառականների մեջ բառասկզբում երևացող *Ֆ* ձայնը ոչ թե հավելված է, այլ հին. *ք* ձայնի թանկագին մեկ մնացորդը»⁷:

Թվում է՝ բացարձակ համապատասխանություն պետք է համարել նախալեզվյան հիմքերի և բարբառներում հաստատված ձևերի արտահայտությունը, քանի որ ցեղակից լեզուներն էլ միանական են նախահնչյունի հարցում: Սակայն խնդրին այլ մոտեցում է ցուցաբերում Գ. Զահուկյանը: Ելնելով գրաբարբարբառներ բացահայտ հակադրությունից՝ նա կասկածանքով է ընդունում *Ֆ* հավելականի հնագույն արտահայտությունը հիշյալ բառերի սկզբում. «...այս ենթադրությունը որոշ կասկածներ է հարուցում այն առումով, որ այս կարգի *Ֆ*-ն որոշ դեպքերում տարածվում է ժամանակակից բոլոր բարբառներում – հմմտ. գրաբարի *արբ* արմատի դիմաց *հարբ* (**sr̥b-*), *ալի(ք)*, *ալևոր-ի* դիմաց՝ *հալևոր* (**pl̥io*) և այլն»⁸:

Նախալեզու/ցեղակից լեզուներ-բարբառներ անմիջական կապի հաստատման համար բավական է նույնիսկ նվազագույն պատճառաբանվածությունը: Այս դեպքում պետք է Ակատի ունենալ, որ բարբառներում *ալի* բառը հաստատված է բաղադրյալ բառի կազմում և առավել հնարավորություն ուներ պահպանելու իր հնագույն ձևը, մինչդեռ հին գրական լեզվում այն ուներ նաև անկախ գործածություն, որի պայմաններում բառը կարող էր ենթարկվել կանոնավորման և զանազան փոփոխությունների: Երկրորդ՝ գրական լեզուն չի ձևա-

⁶ Հր. Աճառյան, *ՈՂՎ. աշխ.*, էջ 94:

⁷ Նույն տեղում, էջ 299:

⁸ Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 265:

վորվում միայն ժամանակի խոսակցականների հիմքի վրա, այլև ժառանգում է նախորդի մեջ հիմնավորված լեզվական միավորներ: Այդ վիճակը որոշակիորեն արտահայտվում է աշխարհաբար գրական լեզվի և ժամանակակից բարբառների հարաբերակցության մեջ, երբ նոր լեզուն վերցրել է գրաբարյան այլևոր և ոչ թե ժողովրդական հայկեր ձևը: Առանց լուրջ փաստարկումների էլ կարելի է ենթադրել, որ սկզբից ևեթ հայերենում գործածվել են արբ և հարբ արմատները՝ «խմել» և «հարբել» իմաստային տարբերակումներով: Երկու իմաստների համար գրական լեզուն նախընտրել է արբ ձևը, իսկ խոսակցականները պահպանել են *հ*-ով զուգահեռը՝ մյուս իմաստի համար գործածելով խմել բառը:

Անդ «արտ» բառը գործածվում է քիչ թվով բարբառներում և գրաբարյան արմատի դիմաց ունի նախաձայն *հ*-ով ձև՝ հանդ: Հ-ի նախնականությունը որոշելու համար ցեղակից լեզուներից վկայված սակավաթիվ փաստերը որևէ հիմք չեն տալիս: Միայն կարելի է հեռավոր պայմանականությամբ ընդունել, որ բարբառները հետևել են ներգոյական հոլովի յանդի ձևին, որը հաճախ է գործածվում գրաբարում: Բառի ծագումնաբանական նոր քննարկումներին օժանդակելու նպատակով կարևոր ենք համարում Արցախ-Սյունիքի խոսվածքների փաստերով լրացուցիչ բացատրություն տալ Հր. Աճառյանի հետևյալ դիտողությանը. «Նույնն է հաջորդ անդ բառի հետ, որի վերջին իմաստն է «տուն». հին նահապետական կյանքում տունն ու արտը իրարից անբաժան բաներ էին. այսօր էլ «տուն-տեղ» ձևը նման մի երևույթ է ցույց տալիս գավառականներում. Ղրբ. հանդավար, որ իրապես անդ «արտ» վարել բառերից է կազմված, ոչ միայն նշանակում է «հող, կալվածք», այլև «տուն, տեղ, մեկի գտնված տեղը, կողմը»⁹:

Եթե Ղարաբաղի բարբառի ինչ-որ խոսվածքներով հնարավոր է բացատրել հանդավար բառի հնչյունակազմը, ապա հանդ բառի մեջ ոչ քմային *ա* ձայնավորն ունեցող խոսվածքներում բարդության վերջին բաղադրիչի համար գոյություն ունի նոր ու վատահելի մի այլ հիմք: Բանն այն է, որ բարբառախմբում գործածվում են վար և վար գուգահեռ ձևերը, որոնցից երկրորդն ունի «շարք, ակոս, մեկին հատկացված աշխատաբաժին, աշխատատեղի գծված սահման» և այլն իմաստները: Ղարաբաղի մի շարք խոսվածքներին և Գորիսի բարբառին հատուկ հնչյունակազմով հիմքերը ցույց են տալիս, որ հանդավար-ը ձևավորված պետք է լինի հանդ և վար բաղադրիչներով, որը ձայնավորների քմայնացման միակ հնարավոր միջոցն է: Հաշվի պետք է առնել, որ բարբառախմբում հանդ և հանդավար բառերը իմաստով խիստ սահմանազատված են, այսինքն՝ վերջինս նշանակում է «տան շուրջը եղած տարածքը, բակը ևն» և ոչ երբեք՝ «արտ, հանդ, դաշտ»: Հենց բարդությունն էլ այն նպատակի համար են ստեղծել, որ տնամերձն առանձնացնեն արտի, խտտի և այլ նպատակների համար հատկացված տարածքից:

Անիծ «ոչիլի ձու» բառի *հ* նախահավելականով ձևը հատուկ է միայն Արցախ-Սյունիքի խոսվածքներին: Սա պատահական երևույթ չէ. բարբառախմբը շատ դեպքերում է շեղվում թե՛ գրաբարից և թե՛ հայերենի բոլոր բարբառներից, հարազատ մնում նախալեզվյան այն հնչյուններին, որոնք հայերենում սովորաբար տալիս են *հ*: Նշենք թեկուզ ինչ// հինչ, ով// հով, ուլ// հուլ զուգահեռ ձևերը: Նշանակում է նախաձայն *հ*-ն սկզբից ևեթ այստեղ շեշտված արտահայտություն է ունեցել և ուշ շրջանում էլ չի ենթարկվել փոփոխությունների: Այս հանգամանքից էլնելով՝ հանիծ ձևը կարելի է բխեցնել *skoniel-, *skniel- ենթադրյալ նախահիմքից:

Աներ բառի սկզբում հավելական *հ* ունի դարձյալ Արցախ-Սյունիքի բարբառախմբը: Հր. Աճառյանն այն ընդգրկում է չստուգաբանված արմատների

⁹ Հր. Աճառյան, Գշվ. աշխ., էջ 186:

մեջ, իսկ Գ. Ջահուկյանը բառի համար հարցականով ընդունում է նախալեզվյան anero- հիմքը, որի համապատասխան ձևերը կարելի է գտնել այր բառի համար Մելեի բերած նախահիմքային օրինակներում. «...սեռ. առն< հնչ. anreos, տր. առն<*anrai,*anri, գործ. արամբ, սեռ.-տր. արանց կազմված մնանությամբ զառն բառի, հզ. հյց. արս<*anros, հզ. ուղ. արք շինված սրանից»¹⁰:

Որ այր և աճեր բառերի միջև գոյություն ունի նախնական կապ, մասնակիորեն կարելի է հաստատել Արցախ-Սյունիքի խոսվածքներին հարազատ ուճերով ու արմատապահպանման հնարավորությունների հաշվառումով: Այսպես, թեև հաճ «մեծ մայր» բառը անկախ չի գործածվում բարբառախմբում, սակայն նրա գոյությունը կարելի է գուշակել «շան հանք ու պերք», «քու աշխարհի հանողին», «քու հանող-պիրողին» և այլ արտահայտություններում՝ մշտապես ուղղված կնոջ հասցեին: Այս հիմքի վրա էլ կարելի է հանգել հետևյալ եզրակացությամբ: Եթե ոչ ընդհանուր հայերենում, ապա Արցախ-Սյունիքի բարբառախմբում հաստատված հաճեր բառն ունի բաղադրյալ կառուցվածք. այն ձևավորվել է հաճ և այր արմատների բարդությամբ՝ միանգամայն համապատասխանելով նաև բարբառախմբին հատուկ այ>է հնչյունափոխությանը (հաճ>այր>հաճեր): Այնուհետև իր այդ կառուցվածքի համապատասխան ենթարկվել է հայր, մայր, եղբայր բառերի հոլովման օրինաչափությանը (հօր, մօր, ախաօր, հանօր): Բառի նոր կառուցածն ընդունելու դեպքում կարելի է կատարել մի հնարավոր հետևություն, այսինքն՝ դեռևս չստուգաբանված հաճ «հաճել» արմատը նախալեզվյան նույն հիմքից է ծագում: Այս դեպքում պետք է ընդունել նաև, որ հաճել բառի համար նախնականը Արցախ-Սյունիքի խոսվածքներում այնքան տարածված «ծնել, սերել, աշխարհ բերել» իմաստն է եղել:

Անց «անցնելը» հիմքը արմատական բառարանում չստուգաբանված բառերի շարքում է, որի դիմաց Արցախ-Սյունիքի խոսվածքների համար Հր. Աճառյանը նշում է նախահավելական Բ-ով և առանց հավելական ձևեր՝ առանց կառուցվածքային այլ տարբերակումների: Բառի համար, սակայն, նախալեզվյան հիմքեր է առաջարկում Էդ. Աղայանը. «Հայերենը ծագում է արմատի -sko մասնիկով աճած ձևից՝ ստորին ձայնդարձով (*snet/-sko)>անց: Նույն արմատից է ծագում նաև հայ ընթանալ բայի ընթ. արմատը, որի համար Հր. Աճառյանը կանխադրում է *senth նախաձևը (*senth>ինթ-անալ>ընթանալ»¹¹:

Բառի համար վկայած նախալեզվյան հիմքերի ճշգրտումներն ու հաստատումը կատարվել են Գ. Ջահուկյանի կողմից. «Անցանեմի-ի ստուգաբանությունը մերն է. ամենայն հավանականությամբ կազմված է սիզմատիկ աորիստի հիմքից (snt-s->անց)-ան-եմ-ով: Աղայանը ենթադրում է -sk-, որը, սակայն, այլուր չի հանդիպում»¹²:

Այլ առիթներով Գ. Ջահուկյանը նորից է անդրադառնում հիշյալ հարցին՝ կատարելով նաև հայերենին մերձակից ձևերի առանձին քննարկումներ. «Հր. Աճառյանի կողմից անծանոթ ծագման համարված մի շարք բառերի ծագումը այժմ կարելի է որոշված համարել. ա) ամենայն հավանականությամբ հնդեվրոպական ծագում ունեն անցանեմ/անց-<*sntset *sent «ուղղություն վերցնել, գնալ» արմատից, որտեղից հայ. ընթանամ, ավեստ. hant «հասնել», հ.իլ. sēt «ուղի, ճանապարհ», հ.անգլ. sid «ուղարկել», լիտվ. siunciu «ուղարկել» և այլն»¹³:

Ինչպես երևում է, Էդ. Աղայանը և Գ. Ջահուկյանը բառի համար առաջարկում են նախաձայնով հիմքեր, որի հնագույն արտահայտությունը կարող է լինել նախաձայն Բ-ն հընցընել բարբառային ձևի մեջ: Այստեղից էլ կարելի է ենթադրել, որ հընցընել-ին գուգահեռ անց կենալ հարադրությունը Արցախ-Սյու-

¹⁰ Նույն տեղում, էջ 173:

¹¹ Էդ. Աղայան, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 20:

¹² Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1987, էջ 190:

¹³ Նույն տեղում, էջ 383:

հիքի բարբառախմբում ստեղծվել է ուշ շրջանում ընդհանուր հայերենի օրհնաչափությանը համապատասխան:

Բարբառագիտական մեծագրությունների և այլ կարգի բառաքննական ուսումնասիրությունների ակնհայտ թերություններից մեկն էլ այն է, որ բառի ստուգաբանությունների ժամանակ չեն ներկայացնում բառային միավորի բոլոր նշանակությունները, այլ հաճախ հենվում են միայն հին հայերենում դրսևորված իմաստների վրա: Նման մոտեցումը խանգարում է նախահիմքերի ճիշտ ընտրությանը, բաղադրյալ կառույցներից բառամասերի հստակ առանձնացմանը: Այդ բացթողումներն, անշուշտ, վերացվում են նորագույն ուսումնասիրություններում, երբ գրաբարին զուգընթաց կամ նրանից անկախ ձեռնամուխ են լինում բարբառային բառերի ծագումնաբանական քննարկումներին: Այս խնդրում նույնպես մեծ նպաստ ունի Գ. Ջահուկյանը: Իր վերջին արժեքավոր ուսումնասիրություններում նա մեծ տեղ է տալիս հայերենի բարբառներում սովորական գործածություն ունեցող բառերի ստուգաբանություններին, հնագույն փաստերով հիմնավորում դրանց նախալեզվյան ծագումը: Հայագիտության նվաճումների համար այդ կարևորագույն ներդրումը գնահատելու հիմնական երաշխիքն, անշուշտ, հետագա ուսումնասիրությունների մեջ նորանոր բառերի ընդգրկումն է, չնայած ոչ պակաս կարևորություն ունեն նաև քննարկման մեջ ընդգրկված բառերի իմաստային հնարավոր ճշգրտումները: Քանի որ հեղինակի բերած բառաշարքերում մեծ տեղ են գրավում Արցախ-Սյունիքի խոսվածքներին բնորոշ բառերը, ուստի հարկ ենք համարում մեկ-երկու բառերի վերաբերյալ կատարելու հետևյալ դիտողությունները:

Արքա բառի ստուգաբանության ընթացքում արմատական բառարանում Հր. Աճառյանն առանձնացնում է նաև արք արմատական ձևը, սակայն հեղինակը, այլ լեզուներից բառին մոտ արմատներ վկայակոչելով, փոխում է նախապես արտահայտած իր իսկ կարծիքը. «Այս բառը իմ Գավառական բառարանում համարել եմ արքայ բառի արմատը: Չարաչար սխալ: Բառս օտար փոխառություն է թուրք-թաթարական լեզուներից. հմմտ. մանչուր. erki «բռնություն, անսամձություն, ծնողների պաշտպանության վրա հույս դնելով՝ տղայոց հանդուգն արարքները»¹⁴:

«Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ Գ. Ջահուկյանը արք-ը դարձյալ համարում է արքայ բառի արմատական ձևը (էջ 281)՝ առանձնացնելով «իշխանություն, հաղթանդամ» իմաստները: Երկու դեպքում էլ բառի նշանակությունը մասամբ է համապատասխանում Արցախի խոսվածքներին բնորոշ հիմնական իմաստին: Արք այստեղ նշանակում է «հարազատական իրավունք», որ թույլ է տրվում միայն արյունակցական կապով իրար մոտ բարեկամներին: «Իշխելու, բռնանալու» իմաստների բացակայությունը, և Արցախի խոսվածքներում բառի՝ քմային և ձայնավորով գործածությունը (արք) խիստ կասկածելի են դարձնում առաջարկած նախահիմքերը: Այս հանգամանքը կարծես իրավունք է տալիս՝ նախնական իմաստների կապ տեսնել արգանդ և արգահատ բառերի հիմքում ընկած արգ <argy նախահիմքի և արք բառի միջև: Պետք է ենթադրել, որ արք-ը նախապես նշանակել է «նույն արգանդից ծնվածների իրավունք, հարգանք, հնազանդություն», որ գործում է այժմ էլ տարիքային որոշակի տարբերության պայմաններում: Նման հարաբերակցության մեջ հնարավոր է դառնում բացատրել նաև բառարմատի և ձայնավորի քմայնացումը՝ կապված ձայնելի շնչել խլացման հետ (արգ>արք>արք):

Արցախ-Սյունիքի բարբառախմբին հատուկ հնագույն արմատներից է նաև արք բառը, որն ունի և՛ գոյականական, և՛ բայական գործածություն (արքել): Խոսվածքներում բառը հանդես է գալիս և ձայնավորի քմային (Ղրբ.) և ոչ քմային (Գորբ.) տարբերակներով՝ արք // արք, արքել // արքել:

¹⁴ Հր. Աճառյան, Աշխ. աշխ., էջ 347:

Բառի ծագումնաբանական քննությունը կատարել է Գ. Զահուկյանը և առաջարկել հարցականով նախահիմք՝ նկատի ունենալով միայն հունարենում արտահայտություն գտած ձևը...արց[<*արծ-*arg'h-?] «հյուսվածքի սկզբ», արցել [< *արծկել] «հյուսվածքն սկսել» (Ղրբ.)¹⁵:

Առայժմ մի կողմ թողնելով նախահիմքի որոշման հարցը՝ նշենք, որ **արց** // **արց** բառը իմաստային այլ երանգ ունի, քան տրված է հիշյալ բացատրության մեջ: Բառի բուն նշանակությունը հետևյալ կերպ է ներկայացնում Ալ. Մարգարյանը. «Արս, արց.- 1. Հյուսվածքի սկսվածքը, 2. Գործվածքի փակվածքը հատուկ ձևով գործելը: Արցել. - 1. Հյուսվածքի արցը սկսելը, 2. Հյուսվածքը փակել հատուկ գործվածքով»¹⁶:

Բառիմաստի այսպիսի յուրահատուկ դրսևորումը շատ բնորոշ ձևով արտահայտվում է արդ «ձև, կարգավորություն, սարք» արմատական ձևում, որ Հր. Աճառյանը ներկայացնում է հետևյալ կերպ. «Հնիս. art- աճած է հնիս. ar- «կցել, միացնել, արվեստով հորհնել» պարզական արմատից, որի վրա տե՛ս առնել, յարել»¹⁷:

Հարկ է ավելացնել, որ ո՛չ այստեղ և ո՛չ էլ մյուս բացատրությունների մեջ հայերենում հիմնավորված դ մասնիկի նախահիմքի վերաբերյալ Հր. Աճառյանը ոչինչ չի ասում, այլ պարզապես ներկայացնում է այն բառերն ու բառաձևերը, որոնց կազմում արտահայտություն է գտել հիշյալ մասնիկը. «Հայերենում հնիս. ar- դարձած է *ար, որից յ նախդիրով՝ յարել, կրկնությամբ՝ արարի, աճմամբ՝ արդ [արդար, արդինք, արդեօք, յարդ, զարդ], և հողով առնել»¹⁸:

Բառիմաստի ճշգրտումները և նրա արտահայտման համար այլ նախահիմքի գոյության հնարավորությունը կարծես տանում են դեպի Գ. Զահուկյանի մի առավել աչքի ընկնող դիտողություն. «Հուն. բառի ծագումը պարզ չէ: Եթե այս համեմատությունը ճիշտ է, ապա կարելի է վերականգնել հ.-ե. arg'h- կամ r'g'h- [reg'h-] հիմնաձևը: Այս դեպքում արքայ բառը չպետք է կապել սրանց հետ [հ.-ե. rek- «սահմանել» կամ փոխառություն ասոր. միջնորդությամբ]»¹⁹:

Այդ վերջին հիմքի վրա էլ հնարավորություն է ստեղծվում ենթադրելու, որ **արց** բառը ձևավորվել է նախալեզվյան *ar- «ձև, սարք, հյուսվածք» պարզ արմատի և -g'h մասնիկի կցումով, որ սկզբնապես հայերենում տվել է *arg'h > արծ, իսկ Արցախ-Սյունիքի բարբառախմբում՝ արց կամ արց: Արգ>արք անցման օրինակափոխությամբ այստեղ ևս հնարավոր է դառնում բառի քմային տարբերակի (արց) հաստատումը: Թվում է՝ *arg'h>արծ հիմքի վրա կարելի է բացատրել նաև արծան բառի ծագումը՝ առաջնային համարելով նրա «կոթող» իմաստային կողմը և բայահիմք + ան կառուցածի հնարավորությունը հայերենում:

Արմատական բառարանում բերված վկայությունները և «Մեղրու բարբառը» գրքում տրված իմաստային մասնակի բացատրությունը ցույց են տալիս, որ **աղատ** (աղատ անել) բառն իր յուրահատուկ նշանակությամբ առավել հարազատ է Արցախի խոսվածքներին: Բառի համար Հր. Աճառյանը նախալեզվյան որևէ հիմք չի նշում: Բառի ստուգաբանական քննությունը կատարել է Էդ. Աղայանը՝ առաջնային ընդունելով «աղաչել, աղաչանք», «պաղատել, պաղատանք» իմաստային երանգները. «ծագում է հնիս. el-, ol- բնաձայնական արմատից, որից են նաև հայերեն աղ-ալթ, աղ-աչել, ող-ոք, ողբ, եղեր/եղար բառերը»²⁰:

Պետք է նկատի ունենալ, որ բնաձայնական հիմքով բառի առանձնացումը չի համապատասխանում խոսվածքներում գործածվող հիմնական իմաստնե-

¹⁵ Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 293:

¹⁶ Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 377:

¹⁷ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 307:

¹⁸ Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 3, Երևան, 1977, էջ 383:

¹⁹ Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 293:

²⁰ Էդ. Աղայան, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, էջ 17:

րին, որի մասնակի դրսևորումը տալիս է էդ. Աղայանը, «...աղատ արիլ «ամուսնու առաջին կնոջից ունեցած զավակին սիրել»²¹։

Արցախի խոսվածքներում վերջին նշանակությամբ գործածությունն առավել խորացված է և արտահայտում է բաժանված ամուսինների, կաթից կտրրված երեխաների, կենդանիների ձագերի և դրանց մայրերի հարաբերությունները։ Տարբեր պատճառներով ընդհատված կամ խախտված նախկին հարազատական կապի պահանջը որոշ ժամանակ անց նորից է զգացվում. այս պայմաններում աղերսանքը, պաղատանքը առաջ է գալիս ներքին մղումից, կարոտի պահանջից։ Այդ առումով էլ ավելի հարմար է բառիմաստը ներկայացնել «կարոտի, զգացմունքի վերաբրճացում» բացատրությամբ։ Դրա մոտավոր արձագանքը կարծես արտահայտված է «կամ աղն է պակաս, կամ՝ մաղը» ժողովրդական ասացվածքում, որ ասվում է անսպասելի հայտնվողի, նորից մտերմանալու շարժում ձեռնարկողի հասցեին։ Ելնելով բառիմաստի այդ յուրահատկությունից՝ պետք է ենթադրել, որ աղատ (աղատ անել) բառը բաղադրյալ կառուցվածք ունի, որի բաղադրիչներն են աղ և հատել, որ հայերենի բառակազմական հնարավորություններով կարող է ստանալ աղատ, աղատել, աղատ անել և այլ ձևեր։ Այս դեպքում կարող է հարմար լինել նաև ժողովրդական հետևյալ ստուգաբանությունը՝ «աղը հատել է, և նորից աղի կարիք է զգացվում»։

Հոդվածում ընդգրկված մասնակի օրինակներից անգամ կարելի է հետևություն անել, որ հայերենի բարբառներում սփռված ժողովրդական բառերի ծագումնաբանական մանրամասն քննարկումները կարող են երևան հանել բառիմաստի նորանոր արտահայտություններ, բառակազմական հնագույն միավորներ, որոնք, անշուշտ, կնպաստեն նախալեզու-հայերեն առնչությունների հետ կապված հավանական կառուցաձևերի փաստական հիմնավորմանը և երկու լեզուների միջև եղած բառային կապի առավել ընդարձակմանը։ Այդ առումով ուսումնասիրությունների հիմքում պետք է օգտագործել ոչ միայն պատրաստի, անկախ գործածվող բառերը, այլև բառակազմական այն բոլոր միջոցները, որոնց մեջ հաստատվում ու հարատևում են հնագույն արմատները։ Դրանց հետ պետք է զուգակցել նաև հնչյունական հին դրսևորումները, որոնք հնարավորություն կտան վերականգնելու և՛ բառի նախնական կառուցաձևը, և՛ բառիմաստի այս կամ այն դրսևորումը։ Մասնավորապես համապարփակ պետք է դարձնել հայերեն-նախալեզու կապերի միջև նախատեսված ցանկացած քննարկումների ուղղվածությունը՝ գրաբարյան ձևի կողքին վստահություն ցուցաբերելով նաև ժողովրդական լեզվի փաստերի նկատմամբ։ Իսկ որ հայերենի խեղվածքներում կան դեռևս չուսումնասիրված հնագույն շատ արտահայտություններ, վեր է կասկածից։

Б. Х. МЕЖУНЦ — *Направленность исследования древних явлений языка.* — Поскольку обычно исследования древних явлений армянского языка опираются, в основном, на материал габара, автор статьи расширяет поле исследования и, помимо габара, использует языковой материал армянских диалектов. Опираясь материалом сохранившихся в народном языке древних словооснов, словообразовательных частиц и проявлений новых значений, автор делает попытку представить в новом освещении некоторые слова. В частности, со многими дополнительными оттенками представлены слова *արք*, *արք*, *ալլալ*: Как показано в статье, эти слова по своему значению и форме роднятся прежде всего с Арцах-Сюникской диалектной группой, соответственно, касающиеся их свидетельства приводятся из этих говоров.

²¹ էդ. Աղայան, Մեղրու բարբառը, 1954, էջ 292: